ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ (WWW) ԷՋԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ԷՁ-22/2

ք. Երևան «25» հոկտեմբեր 2022թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Կ. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վեբ Ստուդիո ՈՒան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գևորգ Գադուկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համացանցային (www) էջի ձևավորման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսերին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից

ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե **ք. Երևան Մամիկոնյանց 46/5** **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** **ՀՀ 900011000834** **ՀՎՀՀ 02631263** **Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան** ---------- **(ստորագրություն)** **Կ.Տ.**	**«Վեբ Ստուդիո Ռեան» ՍՊԸ** **ք.Երևան, Վարդանանց 7-43,** **ք. Երևան, 45 ա Մեսրոպ Մաշտոց պողոտա** **«Ինեկոբանկ» ՓԲԸ** **Հ/Հ՝ 2050022375301001** **ՀՎՀՀ 02708407** **Էլ. հասցեն՝ info@studio-one.am** **հեռ. (060) 52 23 78** **Տնօրեն Գ. Գաղուկյանի** ---------- **(ստորագրություն)** **Կ.Տ.**

Հավելված N 1
«25» 10 2022թ. կնքված
ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ԷՁ-22/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն	մատուցման ժամկետը**
1	72411300/2	**Հավելված 1***	դրամ	550 000	1	ք.Երևան, Մանիկոնյանց 46/5	մինչև 25.12.2022թ.

Հավելված 1* Համացանցային (www) էջի ձևավորման ծառայություններ

1	72411300/2	Կայքի գործունեության հնարավորինս համապատասխանեցում «կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի՝ «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» N 1521-Ն որոշման դրույթներին Կայքի հայերեն բաժնի տառատեսակի փոփոխություն՝այն դարձնելով «Գրապալատ»: Կայքի դիզայնի ֆոնը դարձնել առավել մուգ երանգի (ցանկալի է ՔԿ դրոշի գույնի՝ մուգ կապույտի տրամաբանությամբ)՝ տեքստային հատվածների առավել տեսանելիության համար: Լրամշակումների իրականացում կայքի տարբեր բաժիններում և ենթաբաժիններում՝առանձին դեպքերում ավելացնելով նորերը. -«Քննչական կոմիտեի մասին» բաժնի վերանվանում «ՀՀ քննչական կոմիտեի մասին» անվամբ և նշված բաժնում ընդգրկել հետևյալ ենթաբաժինները. - «ՀՀ քննչական կոմիտեի ստեղծումը», «Խորհրդանիշը», «Համազգեստը», - «ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի օրը», - «Դասային աստիճանները», - «Մեդալները և կրծքանշանները» (ենթաբաժնում տեղադրված մեդալների և կրծքանշանների պատկերները զարգացնել՝ավելի խոշոր, 3D առաջ սահող պատկերներով), է. «Գործառույթները», ը. «Կոլեգիա», - «Տարվա քննիչ և տարվա ստորաբաժանում», - «ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահները»: - «Քննչական կոմիտեի մասին» բաժնում ներկայումս տեղադրված «ՀՀ քննչական կոմիտեի համակարգը» ենթաբաժնի ներառում «Կառուցվածք» բաժնում, քանի որ ՀՀ քննչական կոմիտեի կառուցվածքն ընդգրկված է ՀՀ քննչական կոմիտեի համակարգում: - «Նորություններ» բաժնի վերանվանում «Նորությունների արխիվ» բաժնի և այդտեղ ներառում ձախ հատվածի ներքևում գտնվող «Պատկերասրահ» բաժինը՝ «Ֆոտոտեսադարան» վերանվանումով և հնարավորության ստեղծում, որպեսզի «Տեսաձայնադարան», «Լրահոս» և «Ֆոտոտեսադարան» ենթաբաժիններում առկա նյութերը դասավորված լինեն ըստ տարեթվերի՝

		հեշտ որոնման նպատակով: - Ներկայումս «Նորություններ» բաժնում առկա «Հայտարարություններ» ենթաբաժնի հանում և ձախ հատվածում նոր ու առանձին «Հայտարարություններ» բաժնի ստեղծում՝ այնտեղ ներառելով նաև «Ծառայությունը կոմիտեում» բաժնի «Քաղաքացիական ծառայողներ, հայեցողական պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք» ենթաբաժնում առկա «Թափուր հաստիքներ» անվանումով բլոկը, արդյունքում՝ նոր ստեղծված «Հայտարարություններ» առանձին բաժնում երեք նոր՝ «Հայտարարություններ», «Թափուր հաստիքներ», «Իրազեկումներ» ենթաբաժինների ստեղծում: - «Փաստաթղթեր» բաժնի վերանվանում «Փաստաթղթեր և նախագծեր» բաժնի և երկու նոր՝ «Քննչական կոմիտեի կանոնադրություն», «Իրավական ակտերի նախագծեր» (մարմնի կողմից մշակված և հանրային քննարկման ներկայացվող օրենսդրական ակտերի նախագծերի տեղադրման համար) ենթաբաժինների ավելացում, -«Փաստաթղթեր» բաժնի «Վիճակագրություն, միջնորդագրեր, տեղեկանքներ» ենթաբաժ ի վերանվանում «Վիճակագրական հաշվետվություններ, միջնորդագրեր, տեղեկանքներ» ենթաբաժնի, - «Միջազգային համագործակցություն» բաժնի «Սուրեր» ենթաբաժնի վերանվանում «Այցելություններ» ենթաբաժնի, - «Հղումներ պետական մարմինների պաշտոնական կայքերին» բաժնի ավելացում: Կայքի առաջին էջում (home page) անմիջապես երևացող 5 նորությունների բաժնի մատուցում նոր դիզայնով և առավել մատչելի մատուցմամբ: ՔԿ նախագահի և տեղակալների համակարգման ոլորտների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության տեղադրում՝ յուրաքանչյուրի կենսագրությունից հետո: Կայքի «Ղեկավարություն» բաժնի «Քննչական կոմիտեի նախագահ» ենթաբաժնում տեղադրված «Կենսագրություն», «Ելույթներ և հարցազրույցներ», «Ուղերձներ», «Տեսադարան» ենթաբաժինների, երբեմն նաև այլ բաժիններում առկա ենթաբաժինների, հերթականության՝ առանց միջամտությունների շարունակական փոփոխման խնդրի կարգավորում, ստատիկ հերթականության պահպանում: Կայքի գլխավոր էջի գլխամասում տեղադրված տվյալների՝ «Քննչական կոմիտեի հասցեն» վերնագրի և դրա ներքո տեղադրված տեղեկատվության (հասցեն, հեռախոս, ինչպես հասնել) հանում, քանի որ այդ ամենն առկա է կայքի աջ հատվածում առկա «Հետադարձ կապ» ենթաբաժնում: Կայքի գլխավոր էջի ձախ հատվածում տեղակայված «Հետադարձ կապ» բաժնի հանում՝ աջ հատվածում առկա նույնաբովանդակ ենթաբաժնի հետ չկրկնվելու նկատառումներով: Կոմիտե հասնելու քարտեզը կայքում ակտիվացնել և այն նախատեսել «Հետադարձ կապ» բաժնում «Ինչպե՞ս հասնել» ենթավերնագրի ներքո: Կայքի հետնապատի աջ հատվածում հասցեի փոխարեն կայքի այցելուներին ուղղված տեքստի (ողջույնի խոսք կամ իրավունքի իրացման հիշեցում կամ արդար քննության իրականացման, օրենքով պաշտպանված լինելու նշում և այլն) տեղադրում՝ <u>տեքստը կտրամադրվի լրացուցիչ</u>: Կայքի գլխամասում տեղադրված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե» անվանման ևՔԿ լոգոյի ավելի մեծացում և տեղափոխում նշված հատվածի ձախ հատված, անհրաժեշտության դեպքում՝հետնանկարի փոփոխում (կտեղեկացվի լրացուցիչ): ՔԿ պաշտոնական կայքի ստորին բլոկում առկա «Որոնվում է» բաժնի ծրագրային փոփոխություն և հնարավորության ստեղծում, որպեսզի «Նորություններ» բաժնում համապատասխան նկարով և «Որոնվում է» վերնագրով պարբերաբար տեղադրվող հերթական նոր դրված լուրը թարմացված տարբերակով, նոր կադրով երևա նաև ստորին բլոկում՝ինքնաշխատ տարբերակով: Հնարավորության ստեղծում, որպեսզի ձախակողմյան գլխավոր մենյուի յուրաքանչյուր բաժին, ոչ թե կուրսորը սեղմելիս բացվի, այլ կուրսորի շփումից «առաջ գա», տառաչափը խոշորանա և

		ներսի ենթաբաժինները թափվող տողերով բացվեն: Գլխավոր էջի ձախակողմյան հատվածում տեղադրված բլոկների՝ Ինչպե՞ս ստանալ տեղեկատվություն, Քրեական գործ հարուցելու առիթները, Կողմերը և քրեական դատավարությանը մասնակցող անձինք , տեղափոխում աջ կողմ՝ օրացույցի փոխարեն, իսկ օրացույցի և ստորին բլոկի «Որոնվում է» բլոկի տեղափոխում ձախ կողմ, այս պահին առկա բլոկների փոխարեն՝ ձախ մենյուի անմիջապես ներքևում: Կայքի ստորին բլոկում «Ղեկավարություն» և «Քննչական կոմիտեի համակարգը» բաժինների հանում, քանի որ նույն բաժինները առկա են նաև գլխավոր էջի ձախակողմյան բաժիններում, Օրացույցով որոնողական համակարգի վերազինում՝ ծրագրային հնարավորության ընձեռում, որպեսզի դեպի նախորդող ժամանակահատված գնալիս, երբ նշվում է կոնկրետ օր, իսկ այնուհետև վերևի սլաքով հետ գնալու պրոցես է իրականացվում, օրացույցը չվերադառնա տվյալ ընթացիկ ամսվան, այլ վերադառնա այն ամսվան, որը որոնվում է: PDF ֆորմատով տեղադրվող մեծ չափերով փաստաթղթերի ներբեռնման տեխնիկական խնդիրների վերացում, հնարավորության ստեղծում, որպեսզի առանց որևէ խնդրի տեղադրվեն PDF ֆորմատով գրքեր, աշխատություններ և այլն: Ծրագրով սահմանված լիմիտի, ծավալի փոփոխություն: «Էլեկտրոնային հարցում» բաժնի միջոցով ՔԿ-ին դիմած քաղաքացիների հարցումների ինքնաշխատ վերահասցեագրում press@investigative.am պաշտոնական էլ.հասցեին. /Admin-ում գոյություն ունեցող «Հարց ու պատասխան» բաժնի վերաթարմացում և վերազինում: Բոլոր ստացված հարցումների անհապաղ իրազեկման հնարավորության ընձեռում/: Տեղադրված լուրի ուղեկցող լուսանկարի հեշտացված փոփոխության ծրագրային ապահովում, սերվերից լուսանկարը հանելու դեպքում նախնական տարբերակի պահպանման երևույթների բացառում: Ծրագրային հնարավորության ընձեռում, որպեսզի «Նորությունների արխիվ» բաժնի «Տեսաձայնադարան» ենթաբաժնի «Տեսանյութեր» հատվածում տեղադրվող տեսանյութերը արտացոլվեն նաև կայքի գլխավոր էջի աջ կամ ձախ կողմերում: Կայքի առաջին էջում (home page) անմիջապես երևացող 5 նորությունների բաժնի հատվածում տեղադրվող տեղեկատվության կարճ նկարագրությունը ավելի մեծ ծավալով տեղադրելու հնարավորության ստեղծում, ինչպես նաև հնարավորության ստեղծում, որ վերջինիս վրա սեղմելիս նյութը բացվի ամբողջական ծավալով: (Այս պահին այդ հնարավորությունը առկա չէ. կարճ տեքստի վրա սեղմելիս բացվում է ամբողջ նյութը, իսկ առավել մեծ տեքստի տեղադրման դեպքում դրա մի զգալի մասը չի երևում առաջին էջում): Կայքում առկա կոդային սխալների վերացում: Կայքի թեսթավորում ժամանակակից բրաուզերների վրա: Ծրագրային համակարգերի համատեղելիության ապահովում վերջին տարբերակների հետ: Աշխատանքի ընթացքում առաջ եկող այլ խնդիրների շտկում, դիզայնի ուղղությամբ ընթացիկ առաջարկությունների քննարկում և շտկում:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ք. Երևան Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011000834
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Վեբ Ստուդիո ՈՒան» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 7-43,
ք. Երևան, 45 ա Մեսրոպ Մաշտոց պողոտա
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022375301001
ՀՎՀՀ 02708407
Էլ. հասցեն՝ info@studio-one.am
հեռ. (060) 52 23 78
Տնօրեն՝ Ջ. Գաղուկյանի

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«25» 10 2022թ. կնքված
ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ԷՁ-22/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72411300/2	համացանցային (www) էջի ձևավորման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	250 000	350 000	550 000	550 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
Վճարումները կատարվում են ըստ հանձման-ընդունման արձանագրությունների:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ք. Երևան Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011000834
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Վեբ Ստուդիո Ոնե» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 7-43,
ք. Երևան, 45 ա Մեսրոպ Մաշտոց պողոտա
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022375301001
ՀՎՀՀ 02708407
Էլ. հասցեն՝ info@studio-one.am
հեռ. (060) 52 23 78
Տնօրեն՝ Գ. Գալդուլյանի

(ստորագրություն)
Կ.Տ.